ԷՅ·Ի·ՋԻ·ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

AEG SERVICE

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՄԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 201-1676

ք. Երևան «01» 02 2019 թ.

Հ.Հ. Վարչապետի աշխատակազմ
(կազմակերպության, ծեռնարկության անվանումը)

այսուհետ Պատվիրատու, ի դեմս Գարիկ Խաչատուրի Մուսինյանի
(պաշտոն, անուն, ազգանուն)

որը գործում է Կանոնադրության հիման վրա և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊ Ընկերությունը՝ այսուհետ՝ Կատարող, ի դեմս Ընկերության Գլխավոր տնօրեն Արման Նալբանդյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը՝ այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուի գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայություններ՝ այսուհետ Ծառայություններ՝ Գազատար 49/2 հասցեում՝ այսուհետ Օբյեկտ:
(գործունեության հասցեն)

1.2. Ծառայությունները ներառում են՝

ա) գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննում, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգում, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացում:

բ) գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննում, ծխաօդատար ուղիների քարշի ստուգում:

գ) գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում: Անհրաժեշտության դեպքում բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորում:

դ) գազասպառման կենցաղային համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին Օբյեկտում ներկա գտնվող Պատվիրատուի գազասպառման համակարգի հետ առնչություն ունեցող աշխատակիցների հրահանգավորում:

1.3. Պատվիրատուի գազասպառման կենցաղային համակարգի գազօգտագործող սարքավորումները և դրանց քանակը, ինպես նաև Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ժամանակացույցը սահմանվում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված թիվ 1-ում:

1.4. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու պահից և գործում է 3/երեք/ տարի ժամկետով:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Մեկանգամյա Ծառայության գումարը կազմում է 18774 (գումարը թվերով) (տասնութ հազար յոթհարյուր յոթանասուն չորս) (գումարը տառերով) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

2.2. Սույն Պայմանագրի գինը կազմում է Պայմանագրի գործողության ողջ ընթացքում մատուցված Ծառայությունների գումարի հանրագումարը:

2.3. Պատվիրատուի կամ նրա ներկայացուցչի կողմից Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի (Հավելված թիվ 2) հաստատումը (ստորագրումը) նշանակում է Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայությունների ընդունում:

2.4. Պատվիրատուն Կատարողին վճարում է սույն Պայմանագրի 2.1 կետով սահմանված գումարը Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց և հաշիվ ապրանքագիրը Պատվիրատուի կողմից ստանալուց հետո՝ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

2.5. Պատվիրատուն Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ Կատարողի բանկային հաշվին փոխանցելու եղանակով:

2.6. Պայմանագիրը կնքելուց հետո Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պատվիրատուն կարող է վճարել կանխավճար, իսկ վճարման ենթակա գումարի մնացած մասը՝ Ծառայությունների հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց և հաշիվ ապրանքագիրը Պատվիրատուի կողմից ստանալուց հետո՝ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կատարողը պարտավոր է՝

3.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

3.1.2. Ծառայությունները մատուցել անձամբ:

3.1.3. Ծառայությունները մատուցել սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և ծավալներով:

3.1.4. Մատուցել վճարովի Ծառայություններ սույն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ համաձայն Հավելված թիվ 1-ում նշված սպասարկման ժամանակացույցի:

3.1.5. Պատվիրատուի պատշաճ հայտի /կանչի/ հիման վրա, աշխատանքային օրերին և ժամերին մատուցել անվճար Ծառայություն:

3.1.6. Պատվիրատուին պատշաճ ծանուցել Ծառայությունների մատուցման ժամկետների վերաբերյալ:

3.1.7. Պատվիրատուի գազասպառման կենցաղային համակարգում խախտումներ հայտնաբերելու դեպքում կազմել խախտումների վերաբերյալ արձանագրություն 3 /երեք/ օրինակից՝ մեկական օրինակ Պատվիրատուին, Գազամատակարարին և Կատարողին, անհրաժեշտության դեպքում իջուցիկ կետը խցափակել և կնիքել հոլոգրաֆիկ կնիքով:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Գազասպառման կենցաղային համակարգում օգտագործել բացառապես տեխնիկական ստանդարտներին համապատասխանող գազօգտագործող սարքավորումներ, օդափոխության նպատակով նախատեսված ուղիները չօգտագործել որպես ծխատար, ծխաօդատար ուղիներում քարշի բացակայության /խաթարված լինելու/ դեպքում չօգտվել գազօգտագործող սարքավորումներից, պահպանել բնական գազի օգտագործման անվտանգության այլ պահանջները:

3.2.2. Գազասպառման կենցաղային համակարգում փոփոխություններ կատարելու դեպքում Կատարողին անհապաղ ներկայացնել այդ փոփոխությունների մասին պատշաճ տեղեկատվություն:

3.2.3. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներով և կարգով վճարել Կատարողին մատուցած Ծառայությունների համար:

3.2.4. Կատարողի կողմից Ծառայությունները իրականացնելու ժամկետների վերաբերյալ պատշաճ ծանուցում ստանալու դեպքում ապահովել Կատարողի կամ նրա ներկայացուցչի մուտքը Օբյեկտ և չխոչընդոտել նրա /նրանց/ պարտականությունների կատարմանը:

3.2.5. Կատարողին ներկայացնել Օբյեկտի գազասպառման կենցաղային համակարգի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:

3.2.6. Կատարողին տրամադրել իր գազասպառման կենցաղային համակարգում հայտնաբերված անսարքությունների վերացման համար անհրաժեշտ սարքեր, պահեստամասեր:

3.2.7. Գազամատակարարման դադարեցման ակտի առկայության դեպքում 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել ակտի կրկնօրինակը, իսկ գազամատակարարման վերականգնման դեպքում նախօրոք պատշաճ ժամկետում ծանուցել Կատարողին՝ ներկայացուցիչ ապահովելու նպատակով:

3.2.8. Կատարողի կողմից գազասպառման կենցաղային համակարգում արձանագրված խախտումները վերացնել արձանագրության մեջ նշված ժամկետում և պատշաճ տեղեկացնել Կատարողին:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. Ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը և որակավորումը:

3.3.2. Միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունների մատուցումը՝ առնվազն 15 /տասնհինգ/ օր առաջ պատշաճ ծանուցելով Պատվիրատուին:

3.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.4.1. Հետևել Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների ընթացքին՝ առանց միջամտելու Կատարողի կամ նրա ներկայացուցչի /ներկայացուցիչների/ գործունեությանը:

3.4.2. Միակողմանիորեն հրաժարվել Ծառայությունների մատուցումից՝ առնվազն 15 /տասնհինգ/ օր առաջ պատշաճ ծանուցելով Կատարողին՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրի շրջանակներում ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված թիվ 1-ով սահմանված գազօգտագործող սարքավորումների քանակի փոփոխության դեպքում կատարվում է սույն պայմանագրով սահմանված Ծառայությունների գումարի վերահաշվարկ:

6.2. Կատարողից անկախ հանգամանքներով պայմանավորված՝ Ծառայությունները սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված թիվ 1-ով սահմանված ժամանակացույցով չմատուցելու դեպքում տվյալ Ծառայությունները մատուցվում են այլ ժամանակահատվածում, ինչն արտացոլվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված թիվ 2-ով սահմանված Ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտում:

6.3. Պատվիրատուի պարտավորությունների չկատարման արդյունքում առաջացած վնասների ռիսկը կրում է Պատվիրատուն:

6.4. Պատվիրատուի կողմից իրեն պատկանող գազասպառման կենցաղային համակարգի նորոգումների, վերականգնման կամ վերակառուցման աշխատանքների կատարումն այլ անձանց պատվիրելու և վերջիններիս կողմից կատարելու, ինչպես նաև Կատարողի կողմից Պատվիրատուի գազասպառման կենցաղային համակարգում տեղադրված հոլոգրաֆիկ կնիքի վնասման և գազասարքի շահագործման դեպքում Կատարողը հնարավոր հետևանքների համար պատասխանատվություն չի կրում:

6.5. Աշխատանքի արդյունքը հանձնելու կամ ընդունելու կետանցի դեպքում, առաջացած ռիսկերը կրում է կետանց թույլ տված կողմը:

6.6. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.7. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| Հ.Հ. Գյուղատնտեսության նախարարություն | «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ |
| Կառավարական թաղամաս | Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 141ա |
| Կոմիտաս 49/2 | Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աղոնցի 10, |
| 02505554 | ՀՎՀՀ 00930884, |
| Հ.Հ. ՖԵ. գրդնտասեռնախարարություն | Բանկ. հաշիվ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| 900[illegible] | ՀՀ 24704022147680130 |
| | Գլխավոր տնօրեն |
| | Ա. Եղբանդյան |

*Գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական*

| | | | |
|---|---|---|---|
| 1. ԳՀՏՍ ծառայության և տեղամասի անվանում | Հրազդան | | |
| 2. Պատվիրատուի բաժանորդային համար | 11006178 | | |
| անվանում | Հ. Հ. Կարապետյանի անվան դպրոց | | |
| գործունեության հասցե | Կոմիտասի 49/2 | | |
| իրավաբանական հասցե | Գառնիսարի թ 1 շ 1 | | |
| հեռախոսահամար | 010-23-56-00 | | |
| 3. Պայմանագրի համար | Կ 0 1 - 7 6 2 6 | | |
| 5. Պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր օրացուցային տարվա համար՝ | | | |
| 5.1. Գազասպառման ամիսներ (նշել՝ «X») | ☒ Հունվար | ☒ Փետրվար | ☒ Մարտ |
| | ☐ Հուլիս | ☐ Օգոստոս | ☐ Սեպտեմբեր |
| 5.2. Ծառայությունների մատուցման ժամանակացույց (լրացնել սպասարկման ամիսները) | Հոկտեմբեր | | |
| 6. Մեկանգամյա Ծառայության գումար (դրամ) | 18714 | | |
| 7. Ավելացված Արժեքի հարկ (նշել՝ «X») | ☒ ԱԱՀ վճարող | | |
| 8. Պատվիրատուի՝ 8.1 Հաշվարկային հաշիվ | 90001102 4099 | | |
| 8.3. Մատակարար բանկ | Հ. Հ. Բ. Ա. Գարեգին Նժդեհի անվան | | |
| 8.5. Գազահամակարգ | Գազատար (գազահաշվիչից հետո) | | d15 - ____ գծմ |
| | Գազասարքեր | | ԳՕ - ____ հատ |
| 8.6. Գործունեության ոլորտներ (նշել «X») | Ուսումնական հաստատություններ ☐ | Առևտրային կազմակերպություններ ☐ | Սննդի օբյեկտներ ☐ |
| 8.7. Ենթաոլորտներ (նշել «X») | Մանկապարտեզներ ☐ | Խանութներ ☐ | Սրճարաններ ☐ |
| | Դպրոցներ ☐ | | |
| | Վարժարաններ (քոլեջներ) ☐ | Մարկետներ ☐ | Ռեստորաններ ☐ |
| | Բուհեր ☐ | Դեղատներ ☐ | Արագ սնունդ (Bistro) ☐ |
| | Այլ ☐ | Այլ ☐ | Այլ ☐ |

Պատվիրատու _____
(Ստորագրություն, Անուն, Ազգանուն)

Հավելված թիվ 1

*սպասարկման և հրահանգավորման պայմանագրի*

Հեզրիկյան

010-515-959 կամ 010-23-66-00

| | |
|---|---|
| 4. Պայմանագրի կնքման ամսաթիվ | « 01 » 02 2012 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| ☐ Ապրիլ | ☐ Մայիս | ☐ Հունիս | քանակ 6 |
| ☒ Հոկտեմբեր | ☒ Նոյեմբեր | ☒ Դեկտեմբեր | |

☐ Ազատված է ԱԱՀ - ից

| | |
|---|---|
| 8.2. Հարկային կոդ ( ՀԿՀՀ ) | 02505554 |
| 8.4. Անձնագիր (Ֆիզ անձանց դեպքում ) | |

| | | | |
|---|---|---|---|
| d20 - ____ գծմ | d25 - ____ գծմ | d32 - ____ գծմ | d40 - 120 գծմ |
| ՋՏ - ____ հատ | ՋԿ - ____ հատ | ՋԿ - 2 հատ | Այլ - ____ հատ |
| Բժշկական հաստատություններ ☐ | Ֆինանսական կազմակերպություններ ☐ | Տեղական ինքնակառավ. մարմիններ ☐ | Այլ ☒ |
| Պոլիկլինիկա ☐ | Բանկեր ☐ | Գյուղապետարաններ ☐ | Վարսավիրանոցներ ☐ |
| Բուժամբուլատորիաներ ☐ | | | Եկեղեցիներ ☐ |
| Հիվանդանոց ☐ | Լոմբարդներ ☐ | Քաղաքապետարաններ ☐ | Ջեռուցում ☐ |
| Լաբորատորիաներ ☐ | Վարկային կազմակերպություններ ☐ | Մարզպետարաններ ☐ | Արհեստանոց ☐ |
| | | | Պահեստներ ☐ |
| Այլ ☐ | Այլ ☐ | Այլ ☐ | Կինոթատրոն ☐ |
| | | | Այլ ☒ |

Կատարող _____ Հարությունյան Վ.

Ստորագրություն, Անուն, Ազգանուն

## ՆՇՈՒՄՆԵՐ